Կ Ա Ր Ծ Ի Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքների նախագծերի[1] վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի նկատառումները հանգում են հետևյալին.

Նախագծերով, մասնավորապես, նախատեսվում է որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատավորի և Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող անհամատեղելիության պահանջների խախտում համարել նաև այդ սուբյեկտների կողմից մարդու հիմնարար իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարած լինելու փաստը (...):

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկմամբ օրենսդրական նման կարգավորումները խնդրահարույց են հետևյալ առումներով.

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածով սահմանված են դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջները: Մասնավորապես, վկայակոչված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

[1] Այսուհետ՝ Նախագծեր:

Վկայակոչված նորմերի համընդհանուր վերլուծությունից հետևում է, որ դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջներն իրենց բնույթով դատավորի մասնագիտական գործունեությունից դուրս այլ գործունեությամբ զբաղվելու արգելքներ են: Մինչդեռ, Նախագծերով նախատեսվող կարգավորումներով որպես անհամատեղելիության պահանջները խախտելու դեպք է դիտարկվում այնպիսի արարքը, որը բխում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատավորի և Սահմանադրական դատարանի դատավորի մասնագիտական կարողություններից:

Փաստորեն, նախագծային առաջարկվող լուծումները շեղվում են դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջների էությունից: Այս առումով, հարկ է նկատել, որ անհամատեղելիության պահանջների այնպիսի շրջանակ նախատեսելը, որը վերաբերում է դատավորի՝ միայն իր մասնագիտական գործունեությունից դուրս այլ գործունեությամբ զբաղվելու արգելքներին, համահունչ է նաև միջազգային-իրավական մոտեցումներին:

Այսպես, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 19-ի «Դատավորների մասնագիտական վարքագծի, մասնավորապես՝ էթիկայի, անհամատեղելի վարքի և անկողմնակալության մասին սկզբունքների և կանոնների վերաբերյալ» թիվ 3 կարծիքի 37-րդ կետի համաձայն՝ որոշ երկրներում դատավորի գործառույթների հետ անհամատեղելիությունը հստակորեն սահմանված է դատավորների կանոնագրքում և դատական համակարգի անդամներին արգելվում է իրականացնել ցանկացած մասնագիտական կամ վճարովի գործունեություն: Բացառություններ են նախատեսված միայն կրթական, հետազոտական, գիտական, գրական կամ գեղարվեստական գործունեությունների համար[2]:

Նույն կարծիքի 39-րդ կետի համաձայն՝ մասնագիտական վարքագծի կանոնները դատավորներից պահանջում են խուսափել ցանկացած գործունեությունից, որը կարող է վտանգել իրենց պաշտոնի արժանապատվությունը և պահպանել հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ՝ նվազագույնի հասցնելով շահերի բախման ռիսկը: Այդ նպատակով, դատավորները պետք է ձեռնպահ մնան ցանկացած մասնագիտական լրացուցիչ

[2] Հասանելի է https://rm.coe.int/16807475bb հղումով:

գործունեությունից, որը կարող է սահմանափակել նրանց անկախությունը և վտանգել անաչառությունը:

«Դատավորների կարգավիճակի վերաբերյալ» Եվրոպական խարտիայի 4.2.-րդ կետի համաձայն՝ դատավորներն ազատորեն իրականացնում են իրենց դատավարական կարգավիճակից բխող գործունեություն: Այս ազատությունը չի կարող սահմանափակվել, բացառությամբ այն դեպքերի, երբ նման արտաքին գործունեությունն անհամատեղելի է դատավորների հանդեպ հասարակության վստահության, նրանց անկախության կամ անաչառության հետ (...): Արտաքին գործունեության իրականացումը, բացառությամբ գիտական կամ գեղարվեստական գործունեության, որոնցից անձը վարձատրություն է ստանում, պետք է օրենքով սահմանված կարգով նախնական թույլտվության առարկա լինի[3]:

2. Նախագծային լուծումներով առաջարկվող կարգավորման վերաբերյալ հաջորդ մտահոգությունը վերաբերում է ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված խախտման «միտումնավոր» բնույթին:

Նախ, հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու հարցը լուծելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետում Բարձրագույն դատական խորհրդի նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի նիստ չհրավիրվելու դեպքում այն հրավիրվում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի կողմից:

Նույն օրենսգրքի 159-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարեցվում են Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել Ազգային ժողովը (...):

Այսինքն, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի և Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հարցը լուծում է

[3] Հասանելի է https://rm.coe.int/16807473ef հղումով:

համապատասխանաբար Բարձրագույն դատական խորհուրդը և Սահմանադրական դատարանը: Նշվածից անմիջականորեն հետևում է, որ խախտումը «միտումնավոր» պետք է որակեն հենց այդ մարմինները[4], ինչն առաջ է բերում մի շարք չփարատված հարցեր: Մասնավորապես, Բարձրագույն դատական խորհուրդը և Սահմանադրական դատարանն ի՞նչ ընթացակարգով և ի՞նչ չափանիշների հիման վրա են թույլ տրված խախտումները որակելու որպես միտումնավոր, ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերում մարդու հիմնարար իրավունքի խախտում արձանագրվելու դեպքում ՀՀ եռաստիճան դատական բոլոր ատյաններով անցած գործը քննած դատավորներից կոնկրետ ում լիազորություններն են ենթակա լինելու դադարեցման անհամապատասխանության պահանջները խախտելու հիմքով, ինչպես է որոշվելու արձանագրված խախտման մեջ կոնկրետ դատավորի (այդ թվում՝ կոլեգիալ կազմով գործած դատական կազմի) «մեղքի բաժինը» և այլն: Բացի այդ, Նախագծերի հիմնավորումներում որևէ անդրադարձ չկա նաև այն հարցին, թե Բարձրագույն դատական խորհրդի անդամը, իր գործառույթների բնույթից ելնելով, ինչպիսի մասնակցություն կարող է ունենալ ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարած լինելու գործընթացում:

2.1. Մյուս կողմից, նախագծային լուծումները խնդրահարույց են քրեական վարույթ իրականացնող իրավապահ մարմինների լիազորությունների հետ զուգակցման առումով: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 352-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում դատավորի կողմից շահադիտական կամ անձնական այլ դրդումներով ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու համար:

Ստացվում է, որ եթե դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամների և Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հարցը քննարկելիս Բարձրագույն դատական խորհուրդը և Սահմանադրական դատարանն արձանագրեն ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի

[4] Նախագծային լուծումներով տրված կարգավորումը եթե մեկնաբանենք այն տեսանկյունից, ըստ որի՝ խախտման միտումնավոր լինելը պետք է արձանագրված լինի հենց ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերում, ապա պետք է նշել, որ միջազգային նման ատյանների կայացրած ակտերով արարքների որակումներ չեն տրվում: Հետևաբար, այդ ակտերով խախտումը չի կարող ի սկզբանե որպես միտումնավոր գնահատված լինել:

կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարած լինելու փաստը, ապա դա ինքնին կվկայի ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացված լինելու մասին, ինչը, սակայն, քրեական վարույթի շրջանակներում հաստատման ենթակա հանգամանք է:

Փաստորեն, նախագծային լուծումներով Բարձրագույն դատական խորհրդին և Սահմանադրական դատարանին վերապահվում են քրեական գործով պարզման ենթակա հանգամանքների վերաբերյալ գնահատական տալու և իրավական հետևանքներ առաջացնող որոշումներ կայացնելու իրավասություն, ինչը խնդրահարույց է:

3. Նախագծերով առաջարկվող կարգավորումն անուղղակի հակասության մեջ է գտնվում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգավորման հետ, որի համաձայն՝ դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը ինքնին հիմք չէ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ անձի՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստի հիմնավորված լինելն ինքնին հիմք է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման (այսինքն՝ դատական ակտի բեկանման) համար: Ստացվում է, որ նախագծային լուծումներով նախատեսված դեպքում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտով արձանագրված միտումնավոր խախտում կատարված լինելու փաստը՝ որպես նոր հանգամանք, հիմք է լինելու ոչ միայն նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման, այլև դատավորի լիազորությունների դադարեցման համար:

Հարկ է նշել, որ թեև Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգավորումը վերաբերում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու արգելքին, սակայն պետք է նկատի ունենալ, որ դատավորի լիազորությունների դադարեցումն ինքնին նույնանում է կարգապահական պատասխանատվության ամենախիստ միջոցի հետ (էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում): Ուստի, պետք է հաշվի նստել Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 7-րդ մասում

ամրագրված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման դեպքում այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու արգելքի ընդհանուր իմաստի և տրամաբանության հետ: Այլ կերպ ասած, չպետք է թույլ տալ, որ օրենսդրական նոր լուծումներով շրջանցվեն Դատական օրենսգրքով արդեն ամրագրված արգելքները:

Ավելին, Նախագծերով նախատեսված փոփոխություններն առնվազն ենթադրում են, որ Նախագծերի ընդունման հիմնավորումներում պետք է մանրակրկիտ ներկայացվեին ինչպես միջազգային-իրավական համապատասխան փաստաթղթերում տեղ գտած մոտեցումները, այնպես էլ միջազգային փորձի մանրակրկիտ վերլուծությամբ պետք է ներկայացվեին նախատեսվող կարգավորումների ռիսկերը, հնարավոր բացասական հետևանքները և այն, թե դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցերն ինչպիսի լուծումներ են ստացել արտասահմանյան երկրներում:

Այսպիսով, Նախագծերին կից ներկայացված հիմնավորումներում բարձրացված մտահոգությունները փարատող հիմնավորումների բացակայությունը կասկածի է ենթարկում առհասարակ նախագծային լուծումների հիմնավորվածությունը և դրանց հետապնդած նպատակի իրավաչափությունը: Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ վերոնշյալ մտահոգությունները չփարատելու պայմաններում նախագծային առաջարկվող լուծումները չեն կարող ընդունելի լինել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ